ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«------» փետրվարի 2013թ. **N----- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2013 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6/2 հասցեում գտնվող հ.16՝ 269.8քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 04.09.2012թ. հ.04092012-01-1211 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Նորայր Շաբոյանին, Գայանե Թովմասյանին և Հայաստան Շաբոյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6/2 հասցում գտնվող շենքը նախկինում հանդիսացել է ԴՕՍԱԱՖ-ի ճաշարանի շենքը:

Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի վճռի համաձայն՝ շենքը համարվել է տիրազուրկ և ճանաչվել է Երևանի Դավթաշեն համայնքի սեփականությունը:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 110-րդ հոդվածի և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 04.09.2012թ. հ.04092012-01-1211 վկայականի համաձայն՝ Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6/2 հասցեում գտնվող հ.16՝ 269.8քմ մակերեսով բնակարանը ներկայումս համարվում է Երևան համայնքի սեփականությունը:

Նշված շենքում 1998-2001թթ. սկսած մինչ օրս թվով 21 ընտանիքներ առանց իրավահաստատող փաստաթղթերի զբաղեցնում են տարածքներ, որոնք բնակիչների կողմից վերակառուցվել են բնակարանների և փաստացի բնակվում են այդտեղ:

Երևանի քաղաքապետի 15.02.2012թ. հ.1493-Ա որոշմամբ շենքի թվով 21 ոչ բնակելի տարածքներն ընդգրկվել են բնակելի ֆոնդում և թվով 14 բնակելի տարածքների նկատմամբ կատարվել է Երևան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում:

Քննարկվող գույքի նկատմամբ նույնպես գրանցված է Երևան համայնքի սեփականության իրավունքը: Ներկայումս քաղաքացիներ Ժորա, Կարեն, Ռոբերտ, Ռուզաննա Շաբոյանների, Հայարփի Գասպարյանի, Գեղեցիկ Հակոբյանի, Սիրանուշ Ումրոյանի, Մարիամ Գրիգորյանի, Վարդգես Գրիգորյանի կողմից ներկայացվել է գրավոր համաձայնություն, համաձայն որի վերջիններս խնդրել են քննարկվող գույքը մասնավորեցնել Նորայր և Հայաստան Շաբոյանների, ինչպես նաև Գայանե Թովմասյանի անվամբ:

Հաշվի առնելով, որ գործող օրենսդրության համաձայն համայնքային սեփականություն հանդիսացող գույքը անհատույց սեփականության իրավունքով օտարելու համար պահանջվում է Երևան քաղաքի ավագանու համաձայնությունը, ապա այս ընտանիքի բնակարանային հարցը լուծելու համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան ավագանու որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ